ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք. գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060887777 araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2024 թվականի N 101-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԱՅԿԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» , «ՋՐԱՐԲԻ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» , ԱՊԱԳԱ ԳՅՈՒՂԻ «ՎԱՀԱԳՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ԵՎ «ԳԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1.2024 թվականի մարտի 04-ին՝ ժամը 11:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Հայկաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
2.2024 թվականի մարտի 04-ին՝ ժամը 13:30–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Ջրարբի գյուղի մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
3.2024 թվականի մարտի 05-ին՝ ժամը 11:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Վահագն Մարգարյանի անվան մշակույթի տուն>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
4.2024 թվականի մարտի 05-ին՝ ժամը 13:30–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Գայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:
5.Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանի պահանջներով:
6.Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**